

**Հայոց ցեղասպանություն. պատճառներ և փաստեր
«Անլուելի զանգակատուն» մատենաշար, Երևան, Ազգային հարցի
և գենոցիդի ուսումնասիրության կենտրոն, 1995**

Ժողովածուի առաջաբանում, շեշտադրելով այն միտքը, որ Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության նկատմամբ անհրաժեշտ է ունենալ նոր մոտեցում, Լ.Խուրշուդյանը, այնուհետև, «Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը» վերլուծական հոդվածում քննության է առնում ցեղասպանությունը ծնող պատճառները, որոնք մինչև օրս էլ գործում են: «Անխուսափելի վտանգից ելնելով,- նշում է հեղինակը,- հայ ժողովուրդը և նրա քաղաքական ղեկավարները պարտավոր են բազմակողմանիորեն ուսումնասիրել հարյուր տարվա պատմություն ունեցող Հայոց ցեղասպանության պատճառները, համապատասխան դասեր քաղելով, հուսալի միջոցներով դիմակայել պանթուրքիզմի հարձակմանը, որի հիմնական նպատակը հայոց պատմական հայրենիքը սեփականացնելն էր»: Բացահայտելով XX դարի սկիզբներին ձևավորված թուրքալեզու ժողովրդուղների ազգային գաղափարախոսության՝ պանթուրքիզմի էությունը, Լ. Խուրշուդյանն ընդգծում է, որ այդ գաղափարախոսության հիմնական նպատակը Աֆրիկայից մինչև Չինաստան և Չինաստանից մինչև Հյուսիսային սառույցալ օվկիանոս սփռված թուրքական ռասայի ժողովուրդների միասնական պետության՝ Մեծ Թուրանի ստեղծումն էր: Այն իրագործվելու էր երեք փուլով.

ա) Թուրքիզմի իրականացում, որը նշանակում էր թուրք բնակչության մահմեդականացում, քրիստոնյաների, մասնավորապես արևմտահայության ոչնչացում:

բ) Օղուզական պետության ստեղծում, որի մեջ պետք է մտնեին Թուրքմենստանը, Թուրքիան, Ադրբեջանը և Պարսկական Ադրբեջանը: Այս ծրագիրն իրականացնելու համար պետք է ոչնչացվեր նաև արևելահայությունը, նվաճվեր Արևելյան Հայաստանը:

գ) Հայկական սեպի վերացումից, Օղուզական պետության ստեղծումից հետո Մեծ Թուրանի պետության ստեղծում, որի մեջ միավորվելու էին թուրքալեզու ժողովուրդները:

«Հանուն թուրք ժողովրդի նոր հայրենիքի ձեռքբերման, հանուն թուրքական հզոր ազգային պետության ստեղծման պետք է ոչնչացվեր ամբողջ հայ ժողովուրդը: Պատմությունը հարցը դրել էր անողոք կերպով. հայոց պատմական հայրենիքում պետք է ապրեր մեկը՝ կամ թուրքը, կամ հայը»: Այս պարագայում, ինչպես նշում է Լ. Խուրշուրյանը. «հայ ժողովրդին մնում էր միայն մի ելք, ձեռք բերելով քիչ թե շատ հուսալի դաշնակիցներ, մարտնչել թուրքական բռնակալների դեմ»:

Հայ ազատագրական շարժման դրոշակակիրները հույս ունեին արևմտյան երկրների դիվանագիտության կամ զինուժի օգնությամբ ազատագրել Հայաստանը, սակայն անարդյունք որոնումներից հետո նրանք ի վերջո հանգեցին ռուսական կողմնորոշմանը: Ընդունվեց «չարյաց փոքրագույնի» կոնցեպցիան, որի համաձայն՝ եթե անկախության համար բարենպաստ պայմանները բացակայում են, ապա կենսական անհրաժեշտություն էր դառնում Ռուսաստանի, բայց ոչ Թուրքիայի տիրապետության տակ գտնվելը, որովհետև, եթե առաջինը նշանակում էր լոկ պետականության կորուստ, ապա երկրորդը հանգեցնում էր հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացմանը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմով Հայկական հարցը միջազգայնացվեց և մտավ դիվանագիտական հարաբերությունների օրակարգ: Սակայն Հայկական հարցը չլուծվեց, և առաջ եկավ զինված ուժով այն լուծելու գաղափարը, որի ընթացքում էլ կյանքի կոչվեցին հայ ազգային կուսակցությունները:

Օսմանյան տիրապետության դեմ պայքարը սկսվում է ֆիդայական շարժմամբ, որից, այնուհետև, հրաժարվելով հայ քաղաքական կուսակցությունները անցնում են երկրում զինված ուժերի ձևավորմանը: Ապա ստեղծվում է փոխզիջումների գնով հաշտության եզրեր գտնելու,

Արևմտյան Հայաստանի կարգավիճակի ընդունելի տարբերակը կյանքի կոչելու պատմական հնարավորությունը: Վճռական խոսքը պատկանում էր երիտթուրքերին, սակայն նրանց հետ ընդհանուր «լեզու գտնելու» քաղաքականությունն արդյունք չտվեց: Իշխանությունը գրավելուց հետո նրանք շարունակեցին Աբդուլ Համիդի հայատյաց քաղաքականությունը: Երիտթուրքերը պաշտոնապես հրաժարվելով պանօսմանիզմից, ընդունեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Թալեաթը հայտարարում էր. «Օսմանյան կայսրության մեջ մահմեդականների և քրիստոնյաների միջև հավասարության մասին ոչ մի խոսք չի կարող լինել այնքան ժամանակ, քանի դեռ չի հաջողվել կայսրությունը օսմանացնելու մեր գիծը»:

Օգտվելով պատերազմական դրությունից, երիտթուրքերը 1915-1916 թթ. սպանդի ենթարկեցին 1.5 միլիոն հայերի, որով և իրականացվեց պանթուրքիզմի ծրագրի առաջին փուլը: Թուրքիան մահմեդականացվեց: Արևմտյան Հայաստանը հայաթափվեց:

Արևմտահայության ոչնչացումից հետո պանթուրքիզմի գաղափարների կրողները պայքար սկսեցին իրենց ծրագրի իրականացման երկրորդ փուլի՝ Օղուզական պետության ստեղծման համար: Օրակարգի մեջ մտավ Արևելյան Հայաստանի նվաճման, արևելահայության բնաջնջման խնդիրը: Սակայն 1915-1916 թվականների ռազմական գործողությունների հետևանքով ցարական զորքերը գրավել էին Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ տարածքը: Թուրքիային մնում էր, առաջին հերթին, ռուսներից ետ նվաճել այդ տարածքները և հետո միայն ձեռնամուխ լինել Արևելյան Հայաստանի զավթման գործին, նշում է հեղինակը:

1916 թվականին Սաքս-Պիկոյի համաձայնությամբ Ռուսաստանը անըստայի էր ենթարկել Վանը, Բիթլիսը, Էրզրումը և Տրապիզոնը, իսկ Ֆրանսիան՝ Ղիարբեքիրը, Խարբերդը, Սվասը և Կիլիկիան: Ղրանով իսկ արմտահայերի կյանքում տեղի էր ունենում արմատական փոփոխություն: Սակայն հետագայում, 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումով բոլշևիկյան Ռուսաստանը, դաշինքի մեջ մտնելով Գերմանիայի հետ, փաստորեն, Թուրքիային վերադարձրեց ինչպես Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական զորքերի կողմից գրաված Արևմտյան Հայաստանի տարածքները, այնպես էլ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նվաճած Ղարսը, Արդահանը և Բաթումը:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո թուրքական բանակը նպատակ ունենալով վերջնականապես իրականացնել պանթուրքիզմի ծրագիրը՝ ստեղծել Օղուզական պետություն, հարձակում ձեռնարկեց Արևելահայաստանի վրա: Օրակարգում դրված էր հայ ժողովրդի լինել չլինելու հարցը: Եվ այդ պահին, թուրքական զավթիչներից իր կյանքն ու հայրենիքը պաշտպանելու համար, ոտքի ելավ ողջ հայ ժողովուրդը:

Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում տեղի ունեցան կենաց մահու ճակատամարտեր, որոնք ավարտվեցին թուրքական բանակի պարտությամբ: Թուրքիան չհասավ իր հիմնական խնդրի իրագործմանը՝ հայ ժողովրդի ոչնչացմանը: Ավելին, պատմական Հայաստանի մի փոքրիկ տարածքում վերստեղծվեց հայկական պետականություն: 1919 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքը հասավ 71.330 քառ. կիլոմետրի, այնինչ Սևրի պայմանագրի համաձայն Արևմտյան Հայաստանի տարածքը պետք է կազմեր 90000 քառ. կիլոմետր:

Երիտթուրքերի փոխարեն 1920 թ. սկզբին Թուրքիայում իշխանության գլուխ եկած Մուսաֆա Քեմալը հետևողականորեն շարունակեց իր նախորդների հակահայկական քաղաքականությունը: Համագործակցելով բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարության հետ և ստանալով նրա համաձայնությունը, 1920 թ. սեպտեմբերի 28-ին Թուրքիան հարձակվեց և գրավեց Ղարսը, Արդահանը, Սուրմալուն և Գյումրին: Այդ նույն ժամանակ Հայաստանի սահմաններին էին մոտեցել Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի զորամասերը, որոնք հրահանգ ունեին գրավել Արևելյան Հայաստանը: Հայաստանի բանակն ի վիճակի չէր դիմակայելու թուրքական զորքերին, միաժամանակ կռվելով ռուսական բանակի դեմ:

«Ստեղծված ծանր իրավիճակում,- գրում է հեղինակը,- Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը հարկադրված էր դիմել հարցի լուծման մի տարբերակի, որը պատմության մեջ ստացել է «չարյաց փոքրագույնը» բնութագրում»:

Ի լրումն Հայկական հարցի դրվագների շարադրման հեղինակը եզրակացնում է. «Պանթուրքիզմը հայ ժողովրդին ոչ մի զիջում չի անելու, քանի դեռ կա պանթուրքիզմի գաղափարախոսությունը, կա և գոյություն կունենա պանթուրքիզմը, որն անվիճելի իրողություն է»:

Կարևոր է հեղինակի եզրահանգումը, ուր նա մատնանշում է Հայոց ցեղասպանության պատմական դասերը, մասնավորապես, որ.

Թուրքական իշխանությունները Հայոց ցեղասպանությունը իրականացրել են Թուրքիան թրջացնելու, մեծ Թուրանի ծրագիրը կենսագործելու համար: Թուրքերը հայոց պատմական հայրենիքը սեփական հայրենիք դարձնելու համար ոչնչացրեցին արևմտահայությունը: 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին առաջին և հիմնական պայմանն էր:

Պատմության ներկա փուլում պանթուրքիզմը, որի դրոշակակիրը նորից Թուրքիան է, վերածվել է միջազգային հզոր գործոնի: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո պանթուրքիզմը նորից ձեռնամուխ է եղել իր գաղափարախոսության չլուծված խնդիրների իրականացմանը, այսինքն՝ հայկական սեպի վերացմանը, առանց որի Մեծ Թուրանի գաղափարը չի կարող իրականացվել: Այդ պատճառով էլ պանթուրքիզմի վտանգը առաջին հերթին սպառնում է Հայաստանին:

Հայոց նորաստեղծ պետականությունը պետք է ղեկավարվի դարերի ընթացքում մշակված, պատմության քննությունը բռնած ազգային գաղափարախոսության սկզբունքներով, հաշվի առնելով արդի շրջանի խնդիրները և պահանջները:

Պանթուրքիզմի դեմ մղվող գոյատևման պայքարում հայ ժողովրդի բնական դաշնակիցը կարող է լինել միայն Ռուսաստանը, որովհետև պանթուրքիզմի հաղթանակը, Մեծ Թուրանի ստեղծումը անխուսափելիորեն հանգեցնելու է մի կողմից Հայաստանի կործանմանը, մյուս կողմից՝ Ռուսաստանի մասնատմանը:

* * *

Մատենաշարի այս գրքույկում զետեղված է Ա.Մելքոնյանի «Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները (19-րդ դարի վերջ - 1915թ.)» հոդվածը: Ուսումնասիրությունը պատմաժողովրդագրական ակնարկ է՝ խարսխված էրզրումի օրինակի վրա, որն առավել հատկանշական է հեղինակի գիտական հարցադրումները բացահայտելու համար:

Ինչպես նշում է հեղինակը՝ Հայոց ցեղասպանության հիմնահարցը գիտական հասարակական-քաղաքական արծածումների թեմա է ոչ միայն հայկական, այլև օտար շրջանակներում: Լույս են տեսել բազմաթիվ արժեքավոր մենագրություններ, տարբեր երկրների արխիվներից քաղված փաստաթղթերի ժողովածուներ, հրապարակումներ և այլն, բայց հարցի մի շարք կողմեր լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն:

Հեղինակը ուշագրավ երևույթ է համարում այն, որ թուրք պատմագրությունը կատարելով թուրքական պետական մեքենայի պատվերը, ժխտելով Հայոց ցեղասպանության փաստը, այդուհանդերձ անուղղակի կերպով ընդունում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի տեղահանության ու կոտորածների իրողությունը, թեև այդ ձեռնարկումները ներկայացվում են իբրև հարկադիր և հայերի «դավաճանությունը» կանխարգելող քայլեր: Չխորանալով այս հարցի մանրամասների մեջ, հեղինակը կարևորում է մեկ այլ հիմնահարց, որն ավելի ակնառու է դարձնում ցեղասպանության իրողությունը: Դա Արևմտահայաստանի հայ բնակչության ժողովրդագրական պատկերն է XV դարի վերջերից մինչև 1915 թ. եղեռնի ընկած ժամանակամիջոցում:

«Հատկանշական է,- գրում է հեղինակը,- որ ուսումնասիրողները, գրեթե առանց բացառության, Հայոց ցեղասպանության ակունքները փնտրել են 19-րդ դարի վերջին քառորդում Սուլթան Համիդ 2-րդի գահակալման շրջանում, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցի ի հայտ գալու փուլում: Մինչդեռ Արևմտյան Հայաստանի էթնոժողովրդագրական զարգացման բացահայտումը հնարավորություն է տալիս պատասխանել մի շարք կնճռոտ հարցերի, ինչպիսիք են՝ արևմտահայության կացությունը Օսմանյան կայսրությունում, հայ ազգային-ազատագրական շարժման սոցիալ-քաղաքական ու տնտեսական նախադրյալները, հայկական նահանգներում ժողովրդագրական գործընթացների միտումները և այլն»:

Հեղինակը ներկայացնելով հայ բնակչության վիճակը, նշում է ի սկզբանե կիրառվող այն միջոցները, որոնցով օսմանցիները աշխատում էին փոխել իրենց նվաճած տարածքների ժողովրդագրական պատկերը. հայրենակ վայրերում բնակեցվում էին մահմեդական ցեղեր, թուրքական ծագում ունեցող էթնիկական խմբեր, և երբ այս միջոցները սպասված արդյունքը չէին տալիս, օսմանցիները դիմում էին տեղահանությանը և կոտորածներին, օգտագործելով վաչկատու ցեղերին՝ քրդերին, լեզգիներին և չերքեզներին: Արդյունքում հայերի մի զգալի մասը փրկվելու համար կրոնափոխ եղավ, ընդունելով մահմեդական դավանանք: Այս ամենն ուղեկցվում էր եկեղեցիների, հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումով:

Հայ բնակչությունը ֆիզիկական բնաջնջումից խուսափելու նպատակով դիմում էր երկու միջոցի՝ առաջինը, դա զենքը ձեռքին դիմակայումն էր, իսկ երկրորդը՝ արտագաղթն էր հարազատ եզերքներից:

«Չետագոտությունները ցույց են տալիս,- գրում է հեղինակը,- որ նույնիսկ այդ պայմաններում 19-րդ դարի սկզբին էրզրումի նահանգում հայ բնակչությունը կազմում էր բացարձակ մեծամասնություն»:

Արտագաղթողները հիմնականում տեղափոխվեցին Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող երկրամասերը, Հյուսիսային Կովկաս և այլուր: Նույն այդ ժամանակ XIX դարի կեսերից, Ղրիմի պատերազմից հետո մեծ թվով լեռնականներ տեղափոխվեցին Արևմտյան Հայաստանի հայաթափ գավառները: Արդեն XIX դարի վերջերին էթնոկազմի նժարը թեքվեց մահմեդական ցեղերի կողմը: Հեղինակը մերժում է այն տեսակետը, թե, իբրև, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը հայ ազգաբնակչության թիվը աճել է: Իր եզրակացությունը հաստատելու համար հեղինակը ընթերցողի ուշադրությանն է հանձնում մեկ դարի ընթացքում 1809-1909 թվականներին հայկական բնակավայրերի (հայկական 13 գավառների օրինակով) և հայ ազգաբնակչության թվի փոփոխության պատկերը ներկայացնող երկու աղյուսակ:

«Մինչև 1915 թվականը՝ Հայոց մեծ եղեռնը,- եզրակացնում է Մելքոնյանը,- մի քանի հարյուր տարի անընդհատ, մերթ դանդաղ, մերթ բուռն տեմպերով էթնիկական ցեղասպանության գործընթացն Արևմտյան Հայաստանում արդեն տեղի էր ունեցել»:

Հեղինակն իր շարադրանքն ավարտում է Միավորված ազգերի կազմակերպության 1948 թ. ընդունած բանաձևի հիշատակումով, ուր հստակ ձևակերպված է «ցեղասպանություն» հասկացությունը՝ «ոչ միայն մեկ ազգի, կրոնական համայնքի կամ ռասայի դեմ ուղղված ֆիզիկական բնաջնջման գործողություն, այլև իր հայրենի հողից, հայրենիքից վտարելու, բռնությամբ ազգափոխելու, կրոնափոխելու, կյանքի անտանելի պայմաններ պարտադրելու ճանապարհով հեռացնելու երևույթները, այսինքն այն, ինչ տեղի էր ունեցել Թուրքիայում դարեր շարունակ»:

1894-1897 թթ. հայկական կոտորածներին է առնչվում նույն գրքույկում զետեղված՝ Լևոն Մկրտչյանի «Արևմտահայության ցեղասպանության Աբդուլ Համիդյան քաղաքականությունը» հոդվածը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը բացահայտեց Օսմանյան պետության սնանկությունը, և նոր գահակալը՝ Սուլթան Համիդը, երկիրը ճգնաժամից հանելու մտահոգությամբ հռչակեց Սահմանադրություն, բայց հրաժարվեց այն իրականացնել: Սուլթանը և նրա

համախոհները լավ էին հասկանում, որ Օսմանյան պետության աքի-
լեսյան զարշապարը եղել և մնում է ազգային հարցը: Իսկ հարցի լու-
ծումը, ըստ Սուլթան Համիդի, քրիստոնյա ժողովուրդների վերացումն
էր: Սուլթանը դարձավ հիմնադիրը թուրք պետական դոկտրինայի, որ
հետո որդեգրեցին երիտթուրքերն ու քեմալականները: Ըստ այդմ հար-
կավոր էր բոլոր մահմեդական ցեղերին միավորել իսլամի դրոշի ներքո,
ստեղծել իսլամական մեծ պետություն, կազմել թուրք ձեռնարկատերե-
րի նոր խավ, որն ընդունակ լիներ իր ձեռքն առնել տնտեսական ու
մշակույթային լծակները:

Հենց այդ ժամանակ էլ ծնվեց թուրանիզմի մանիֆեստը՝ «ես թուրք
եմ: Իմ կրոնն ու ազգը ազնվացեղ են» նշանաբանով: Առավել դժվար էր
միատարր ազգաբնակչությամբ կայսրություն ստեղծելու խնդիրը: Հար-
կավոր էր լուծել քրիստոնյաների հարցը: Այս ժողովուրդները, որ ավե-
լի բարձր մշակույթ ունեին, կամ պետք է ձուլվեին, դառնալով մահմե-
դականներ, կամ ոչնչացվեին ֆիզիկապես ու արտագաղթեին իրենց
հայրենի եզերքներից: Սուլթանը դիմեց երկրորդ միջոցին՝ ոչնչացմանը
և արտաքսմանը:

Միջազեռքն ու Անատոլիան միավորելու թուրքերի ծրագրին խան-
գարում էր «հայկական սեպը», - նշում է հեղինակը: Այդ «սեպի» վերա-
ցումը պետք է լիներ գերագույն նպատակ:

Այնուհետև Լ. Մկրտչյանն անդրադառնում է 1895-1896 թվականնե-
րի հայկական կոտորածներին:

Փաստորեն հայերի ցեղասպանությունը, - նշում է հեղինակը, - սկս-
վել էր 1890-ական թվականներին: Սուլթանը հայերի դեմ օգտագործում
էր քուրդ և հյուսիսկովկասյան ռազմատենչ մուլեռանդ ցեղախմբերին,
«համիդիե» հեծելազորներին, որոնք ասպատակում էին հայկական գյու-
ղերն ու քաղաքները, սպանում և թրջացնում հայերին:

Սուլթանի այս քաղաքականությունն էր, որ ոտքի հանեց հայ ազա-
տատենչ մարդկանց, ծնունդ տալով ազգային կուսակցություններին, ո-
րոնք բարձրացրին ըմբոստության և պայքարի դրոշը՝ ընդդեմ բռնակալ
պետական վարչակարգի: Հայերը ուրիշ ելք չունեին, հարկադրված էին
զենքի դիմել՝ պաշտպանելու իրենց ազգային արժանապատվությունը:

Լ.Մկրտչյանը, վկայակոչելով արխվային վավերաթղթերը, հանգում
է այն եզրակացության, որ 1894-1897 թթ. կոտորածներն անմիջականոր-
են կազմակերպված են եղել իշխանությունների կողմից, ընթացել են
միևնույն սցենարով, և թուրքական կառավարության բոլոր փորձերը՝

մի կողմ քաշվել պատասխանատվությունից, իրողությունը ներկայացնել որպես ամբոխային, զանգվածային անկարգություններ, չեն դիմանում ոչ մի քննադատության:

Էդվարդ Դանիելյանի «Հայ ժողովրդի մեծ եղեռնը երիտթուրքական վարչակարգի կողմից (1914-1918 թթ.)» հոդվածում հեղինակը, քննության առնելով Հայոց ցեղասպանության դրոշապատճառները, գտնում է, որ գլխավորը երիտթուրքերի՝ Մեծ Թուրանի ստեղծման երազանքն էր, մի պետություն, որի սահմանները պետք է ձգվեին Ջիբրալթարից մինչև Չինաստան և ընդգրկեին Ռուսաստանի կազմում գտնվող Կովկասը, Դրիմը, Մերձվոլգյան հողերը, Միջին Ասիան, ինչպես նաև Իրանի մեծ մասը, Աֆղանստանը, Չինաստանի և Հնդկաստանի մի մասը, որ բնակեցված էին մուսուլմաններով:

Երիտթուրքերի ծրագրերի իրականացման ճանապարհին մեծ խոչընդոտ էր հայ ժողովուրդը:

Հեղինակը հեռքում է թուրք պատմագրության կեղծ վարկածները, թե տեղահանությունն ու կոտորածները պատերազմական պարագաների հարկադրական թելադրանք են եղել, քանի որ հայերը երկրի ներսում խռովություններ են բարձրացրել, համակրել և օգնել են թուրքիայի թշնամի ռուսական զորքերին: Ի հավաստումն դրա, նշելով ներքին գործոց նախարար Թալեաթի անմիջական հսկողությամբ հայերի տեղահանությունն ու կոտորածներն իրականացնող հանձնաժողովի ստեղծման փաստը, հեղինակը վկայակոչում է հայ ժողովրդի «մահվան հրամանագիրը», գրված 1915-ի ապրիլի 15-ին Թալեաթի, Էնվերի և Նազըմի ստորագրությամբ: Հրամանագրի հեղինակները, ի տարբերություն Սուլթան Համիդի՝ այս կամ այն հայկական զավառներում սանձազերծած կոտորածների, խնդիր էին դրել բնաջնջել հայ ժողովրդին ամբողջությամբ, որպեսզի մեկընդմիջտ լուծվի «Հայկական հարցը»:

Հեղինակն ընթերցողին է ներկայացնում այն հրեշավոր մեխանիզմը, որով իրականացվեց հայերի ցեղասպանությունը. զենքի ընդունակ հայ այրերի զինաթափումն ու սպանությունները, հայ բարձրամիտ մտավորականության ձերբակալություններն ու գլխատումները, աքսորի ճանապարհին թալանն ու սպանությունները, համաճարակները և այլն:

Դանիելյանն անդրադարձել է նաև 1917-ին բոլշևիկների իշխանության՝ գալու հետևանքով ռուսական զորքերի ետքաշման փաստին, որը նպաստեց՝ պարտված Թուրքիային ձեռնամուխ լինել պանթուրա-

նական իր ծրագրի երկրորդ փուլի իրականացմանը, այն է՝ ոչնչացնել նաև արևելահայությանը: Թուրքերի խնդիրը հեշտաճանաչ էր նրանով, որ Անգլիան և Ֆրանսիան անօգնական թողեցին հայերին, ի հավելումն դրա՝ վրաց մենշևիկների դավաճանությունը, ազերիների հայախալած ցեղասպան քաղաքականությունը, որը տասնյակ հազարավոր հայերի կյանք խլեց:

«Թեև գրականության մեջ, - գրում է հեղինակը, - մասնավոր ջննության նյութ չի դարձել Թուրքիայի՝ 1918-ին դեպի Անդրկովկաս արշավանքի հետևանքով գոի գնացած արևելահայերի թվաքանակի հարցը, սակայն մոտավոր հաշվարկը ցույց է տալիս, որ գոհների թիվը կազմել է առնվազն 500000»: Դանիելյանը եզրահանգում է. «Ակնհայտ իրողություն է, որ հոգեվարք ապրող թուրքական կայսրությունը անցյալ դարի վերջին քառորդից հայերի ֆիզիկական ոչնչացումը հռչակեց որպես պետական ուսմունք, որն իրագործվեց թուրք պետականության կողմից՝ անկախ վարչաձևից: Հայերի ցեղասպանությունն իրագործվեց և՛ սուլթանական, և՛ երիտթուրքական, և՛ քեմալական վարչակարգերի կողմից»: Հետևաբար՝ ցեղասպանության պատասխանատուն թուրք պետականությունն է:


* * *

Ադրբեջանում 1918-1990 թ. ցեղասպանության փաստերին է անդրադառնում Յուրի Հովսեփյանը իր «Հայերի ցեղասպանությանը Ադրբեջանում (1918-1990)» հոդվածում:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը, - ինչպես նշում է հեղինակը, - արմատապես փոխեց ռուսական կայսրության քաղաքական իրավիճակը, որն ավելի սուր ձևով իր անդրադարձը գտավ Անդրկովկասում, մասնավորապես՝ Ադրբեջանում, ուր աշխույժ գործունեություն ծավալեցին ազգային կուսակցությունները: Մուսաֆաթ կուսակցությունը դեռևս 1917 թ. ապրիլին Բաքվում կայացած Կովկասի մահմեդականների առաջին կոնգրեսում պահանջեց ստեղծել Ռուսաստանի մահմեդականությունը ներկայացնող կենտրոնական օրենսդիր մարմին:

Մուսաֆաթականներն առաջնորդվում էին երիտթուրքերի որդեգրած պանթուրքիզմի գաղափարախոսությամբ: Նրանց նպատակը Ադրբեջանի, Դաղստանի և Հայաստանի միացյալ տարածքում թուրքական նոր պետության ստեղծումն էր:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է Բաթումի պայմանագրին,



որն արձակեց թուրքերի ձեռքերը, և նրանք գրեթե անարգել առաջարկվեցին դեպի Արևելյան Հայաստան: Նկարագրված են այն օրհասական օրերը, երբ Բաքվում, Գանձակում, Շամխորում բնակվող հայերի գլխին կախվեց թուրքական յաթաղանը: Այստեղ էլ կիրառվում էին ցեղասպանության այն նույն եղանակները, ինչ կիրառում էին երիտթուրքերը Արևմտյան Հայաստանում՝ զինաթափում, թալան, ապա զանգվածային կոտորածներ ու տեղահանություն:

Բաքվի եղեռնագործությանը մի քանի օրվա ընթացքում զոհ գնաց 30 հազար հայ: Բաքվի կոտորածներին հաջորդեցին Գանձակ, Շամախի, Նուխի քաղաքների և հայաբնակ այլ վայրերի կոտորածները: Կազմակերպված զանգվածային կոտորածներ տեղի ունեցան նաև Շուշիում և այլուր: Հեղինակը, վկայակոչելով արխիվային փաստաթղթերը, ցույց է տալիս, որ այդ կոտորածները կազմակերպել էր մուսաֆաթական Ադրբեջանի կառավարությունը, թաթարական ցեղերի միջոցով, թուրքիայի և անգլիական զորքերի անմիջական աջակցությամբ:

Ուշագրավ է Լաչինի գոտու ստեղծման պատմությունը: Թուրքիայի օրինակով Ադրբեջանի մուսաֆաթ կառավարողները զիտեին, որ հայերին դավանափոխ անել չեն կարող, ուստի միակ եղանակը ֆիզիկական ոչնչացումն էր: Ադրբեջանը խորհրդայնանալուց հետո ազերի բուլշևիկները, հավատարիմ մնալով մուսաֆաթականների գաղափարախոսությանը, Քելբաջարի, Լաչինի տարածքների վրա արհեստականորեն ստեղծեցին «Կարմիր Քուրդիստանի» ինքնավարությունը, անջատելով Ղարաբաղը Հայաստանից: Ադրբեջանի բուլշևիկ ղեկավարներն արգելեցին գաղթած հայերի վերադարձը իրենց բնակավայրերը: Հեղինակը պատահական չի համարում, որ Ադրբեջանում շինարարության և այլ պատրվակներով քարուքանդ էին արվում հայ մշակույթի դարավոր կոթողները՝ հուշարձաններն ու խաչքարերը, եկեղեցիները, հայատառ արձանագրությունները:

Անդրադառնալով Սումգայիթի, Գանձակի, Բաքվի արյունալի դեպքերին հեղինակը գրում է. «Դեռ մինչև դարաբաղյան դեպքերի ծավալումը Ստեփանակերտում կայացած Կոմկուսի մարզային բյուրոյի նիստում Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի ներկայացուցիչ Ասադովը հայտարարեց, որ 100 հազար ադրբեջանցիներ ամեն րոպե պատրաստ են մտնել Ղարաբաղ և սպանոջ սարքել»: Եվ ադրբեջանի ղեկավարները սանձնազերծեցին այդ սպանոջը:

Հեղինակը եզրակացնում է. հայերի ցեղասպանությունը Ադրբեջա-

Նույն թուրքիայում արևմտահայության ցեղասպանության շարունակությունն էր: Դրա կազմակերպիչները եղել են Ադրբեջանի մուսաֆաթական, ապա նաև՝ կոմունիստական կառավարությունները: Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում իրականացվել է պանթուրքիզմի, համաշխարհային հեղափոխության, «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» կարգախոսների ներքո:

* * *

Գրքույկում զետեղված է նաև Սամվել Կարապետյանի «Հայկական հուշարձանների եղեմը Ադրբեջանում» հոդվածը:

«Ավագ եղբոր՝ Թուրքիայի օրինակով, անցած տասնամյակների ընթացքում Ադրբեջանն էլ, զավթած հայկական հողերը յուրացնելու հույսով, ջանք ու եռանդ չի խնայել հայ մշակույթի բազմաբնույթ ու բազմադարյան կոթողները հողի երեսից ջնջելու ու դրանց հետքերն անհետացնելու ուղղությամբ», - գրում է հեղինակը: Անդրադառնալով Ադրբեջանում հայկական արձանագրությունների, խաչքարերի, վանքերի, մի խոսքով՝ քրիստոնեական հուշարձանների ավերումներին և հակիրճ տեղեկություններ տալով դրանց կառուցման պատմական քվականների ու հետագա ճակատագրերի մասին, Կարապետյանը եզրակացնում է. «Այնտեղ հիմա թուրքն է, ուրեմն ամեն ինչ կավերվի, իսկ կատարված ոճրի մասին, ցավոք, կիմանանք շատ ուշ, այնպես, ինչպես մինչև 1993թ. չգիտեինք, թե ինչ վիճակում էին հայ մշակույթի հուշարձանները քելբաջարում կամ Դուբաթլիում, Ջանգելանում կամ Ադդամում: Իսկ այն, ինչ կատարել է թուրքը ազատագրված շրջաններում իր տիրապետության օրերին, ոճիր է ոչ միայն հայերիս, այլև ընդհանրապես մարդկության հանդեպ, քանի որ այն ամենը, ինչ այլևս ջնջված է հողի երեսից, իրավամբ համաշխարհային քաղաքակրթության մաս էր կազմում»: Եղեմը միայն մարդկանց ֆիզիկական ոչնչացումը չէ: Կան նաև մեկ այլ տարբերակ՝ նյութական և հոգևոր. ահա այս է հեղինակի ուսումնասիրության հիմնական եզրակացությունը: